

# PEARLS OF ARMENIAN HERITAGE

## Արտաւազդ Վանահայր (Ութերորդ Դար)



Երաշխատրի Աքանջելագործ Սուրբ Նշան Վանքը, 7րդ դարու վերջ-8րդ դարու սկիզբ: Այս վանքին մէջ կատարուած է Աշոտ Ա թագաւորին օծումը 884-ին:

Բզնունեաց նահանգին Արծկէ քաղաքին մօտակայքը կը գտնուի Երաշխատր Վանքը, որուն վանահայրն է եղած Արտաւազդ Վարդապետը: Ան հիրընկալած է Վահան Գողթնացին այս վանքին մէջ, երբ ան կը թափառէր վանքէ վանք, անապատէ անապատ՝ ապրելով կատարեալ ապաշխարողի ճգնասուն կեանք մը:

Վահան հրաժեշտ առնելով Արտաւազդ Վանահայրէն՝ կ'ուղղուի դէպի Եդեսիա եւ ապա Ռուզաֆա, ուր կը գտնուէր Հեշամ Ամիրան իր արքունիքով, անոր ներկայացնելու համար իր ինքնապաշտպանութեան գիրը. ամիրան կը փորձէ խոստումներով համոզել որ Վահան դառնար դէպի իսլամութիւն, բայց հայ իշխանը կը պատասխանէ որ ինք իսլամութիւնը իր կամքով ընդունած չէր, այլ մատղաշ տարիքին

պատանդ բերուելով՝ այդպէս դաստիարակուած էր, եւ դատապարտուելով՝ կը գլխատուի 737 թուականի մարտ 18-ին, Աւագ Երկուշաբթի օրը:

Արտաւազդ Վարդապետ, որ շատ հաւանաբար եպիսկոպոս էր, Վահանի նահատակութենէն եօթ տարիներ յետոյ անձամբ կու գայ փնտռելու մարտիրոսին գերեզմանը: Այս այցելութեան շնորհիւ, Արտաւազդ Վարդապետ կը գտնէ հայ իշխանին դատավարութեան եւ վկայութեան պատմութիւնը յունարէն լեզուով արձանագրուած: Եդեսիոյ մէջ թարգմանել կու տայ հայերէնի եւ վերադառնալով Երաշխատրի վանքը՝ կը յօրինէ Գողթնացի իշխանին վկայաբանութիւնը, որ մեզի հասած է զանազան խմբագրութիւններով:

Արտաւազդ Վանահայր իր վկայաբանութեան մէջ կը դրուատէ Վահանի հոգեկան վեհութիւնը եւ առաքինական գործը, եւ սկիզբը որպէս յառաջաբան դրած է աղէխարշ ողբ մը՝ հիմնուած արաբներուն կողմէ նոյն ժամանակներուն հայ հողին վրայ կատարած խժոժութիւններուն վրայ:

(Քաղուած Հ. Կիրեղ Վրդ. Քիպարեանի “Պատմութիւն Հայ Գրականութեան” հատորէն)

